ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՑԸ ՍՊԻՏԱԿ ԵՒ ԳԻՒՄՐԻ

(7 Դեկտեմբեր 1994)

1994 թ. Դեկտեմբերի 7-ին, Երկրաշարժի 6-րդ տարելիցի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանը կառավարական պատուիրակութեան հետ, որը գլխաւորում էին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատեանը եւ Գերագոյն Խորհրդի առաջին փոխ-նախագահ Արա Սահակեանը, այցելեց Սպիտակ եւ Գիւմրի՝ մասնակցելու սգոյ արարողութիւններուն եւ մխիթարական հայրական խօսքով քաջալերելու տեղի բնակչութեանը: Այս առթիւ Ամենապատիւ Սրբազան Հօրը ուղեկցում էին Շիրակի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանը եւ որպէս գաւազանակիր Հոգեշնորհ Տ. Միքայէլ Ծ. Վարդապետ Աջապահեանը:

Առաւօտեան ժամը 10.30-ին կառավարական պատուիրակութեան հետ Ամենապատիւ Սրբազան Հայրը այցելեց Սպիտակի շրջանի Ջրաշէն գիւղի մօտակայ բարձունքի կառուցուած յուշահամալիրը, որտեղ տեղի ունեցաւ ծաղկեպսակների զետեղման արարողութիւն եւ հոգեհանգստեան պաշտօն:

Ապա մեքենաների շարասիւնը ուղեւորուեց դէպի Գիւմրի, որտեղ քաղաքային գերեզմանոցում ամփոփուած Երկրաշարժի անյայտ զոհերի շիրիմին կանգնուած խաչքար յուշարձանին նոյնպէս ծաղկեպսակներ զետեղուեցին կառավարութեան եւ Մայր Աթոռի կողմից: Այստեղ նոյնպէս Տեղապահ Սրբազան Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն: Այնուհետեւ պատուիրակութիւնը այցելեց Գիւմրիի նորակառոյց Անի թաղամաս, որտեղ Պատրիարք Հօր օրհնութեամբ բացուեցին եւ բնակութեան յանձնուեցին երկու նորակառոյց շէնքեր:

Ժամը 13.00-ին պատուիրակութիւնը մասնակցեց Գիւմրիում տեղակայուած Ռուսական սահմանապահ զօրքերի զօրամասում կառուցուած յուշարձանի բացման արարողութեանը, որը նուիրուած էր Երկրաշարժի ժամանակ զոհուած զինուորականների եւ նրանց ընտանիքների անդամներին: Սգոյ արարողութեան ընթացքում յարգանքի խօսքով հանդէս եկան գնդի հրամանատարը, վարչապետը եւ Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Հայրը:

Ժամը 14.30-ին Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարքը բաժանուելով կառավարական պատուիրակութիւնից, որը մեկնեց Վանաձոր, այցելեց Գիւմրիի առաջնորդանիստ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին՝ ներկայ գտնուելու Ս. Պատարագի արարողութեանը եւ քարոզով մխիթարելու սգակիր հաւատացեալներին: Տաճարի մօտ Ամենապատիւ Սրբազան Հօրը դիմաւորեցին Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սեպուհ վարդապետ Զուլչեանը եւ քահանայից դասը ու առաջնորդուց եկեղեցի, որտեղ նախագահեց հոգեհանգստեան արարողութեանը եւ ոգեշունչ քարոզով մխիթարեց հայ հաւատացեալ ժողովրդին: Սուրբ Պատարագին ներկայ էին Շիրակի տարածաշրջանում ՀՀ կառավարութեան լիազօր ներկայացուցիչ Անդրանիկ Քոչարեանը եւ Գիւմրիի քաղաքապետ Միքայէլ Վարդանեանը:

Ս. Պատարագից յետոյ, ժամը 17.00-ին, Ամենապատիւ Սրբազան Հայրը այցելեց Շիրակի թեմի Հոգեւոր դպրանոց, որտեղ դպրանոցի սաների եւ դասախօսական կազմի ջանքերով պատրաստուել էր ճոխ յայտագիր՝ նուիրուած Կոմիտաս վարդապետի եւ Ցովհաննէս Թումանեանի ծննդեան 125 ամեակներին: Հանդէսը բացեց դպրանոցի տեսուչ պրն. Մեղրիկեանը, որից յետոյ ելոյթ ունեցաւ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանը: Ցայտագրի կատարումից յետոյ, որը կազմուած էր զեկուցումից, արտասանութիւններից, երգերից, օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Տ. Թորգոմ Պատրիարքը: Հանդէսից յետոյ Ամենապատիւ Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ դպրանոցի դասախօսական կազմի եւ ուսանողութեան հետ:

Ուշ երեկոյեան Տեղապահ Սրբազան Հայրը վերադարձաւ Մայր Աթոռ:

digitised by A.R.A.R.@